

ՄԻՒԽԱՐԱՄ

ՅԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՃԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 7 5 ՅՈՒՆՈՒԱՐ 1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Տիկինին Հոգին

Հայ Տպագրութեան Դարձին մէջ Նշանաւոր

Դէմք մը

Օրորոցք եւ Դապար

1907ի Յուլիսեան

Մուսային Առաջին Այցը

Յուլիսեանի Էջեր

Տեսնւմ Ոգի . . .

Մարդուն Սեր Հանգեալ Կենդանիին

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԱՐՇԱԿ ԱԼՊԵՍԱՃԵԱՆ

ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՊԵՐՃՈՒՅԻ ԵԱԶԸՃԵԱՆ

ՄԱՆՆԻԿ Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՄԻՅՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Ռ. ՍԵՒԱԿ

ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ

30 ՈՍԱԿԻ ՊԱՐԳԵԻ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՃԻՂՍԱՆ
1908

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

REPORT OF THE PHYSICS DEPARTMENT

FOR THE YEAR 1908

PRESENTED TO THE BOARD OF TRUSTEES

AT THE ANNUAL MEETING

Held at Chicago, Illinois

June 10-12, 1909

BY THE PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILL.

1909

Ճ. ՍԻՄՈՆ

Քարիզ



Ք Ր Է Մ

Ս Ի Մ Օ Ն

Կիսեփնով պատրաստւած
էւ առանց որ եւ է նարպակսն իւրի

Լաւազոյն արտադրութիւնն է
ան՝ պահպանելու համար ԴԷՄ-
ՔԻՆ ՈՒ ՉԵՌԲԵՐՈՒՆ
Ճերմակորիւնը

1900ին քարիզեան ոսկի ժապրամ

Քրեմ Սիմոնը մօրթը կը պահպանէ օղին ազդեցութեան դէմ .
ճաթառութեան , կարմրութեաններուն և խորշակահարութեան
առաջքը կ'առնէ :

Եթէ վրայէն Սիմոնի քրեմափոշիի թեթեւ խաւ մը քսուի ,
դէմքի գոյնին երիտասարդութեան շլացուցիչ փայլ մը կու տայ :

Պէտք է ամէն օր գործածել զայն , թաց լաթով մը մօրթին վրայ
տարածելով և յետոյ մեղմ չփումով մը ներս թափանցել տալով :

Ճարպգլին ոչ մէկ մարմին չպարունակելով , ամբողջովին կը
լուծուի ջուրին մէջ :


ՄԻԱԿՆ Է ԱՆ ՈՐ ԸՆԴՈՒՆՈՒՄՆԵՐ ԸՆԼԱՅ-ԲՈՒՆՈՐ ԳԵՂԱՆԻ ԴԵՐՍԱՆՈՒՆԻ-
ՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ :

1860ին հնարուած , իսկապէս առողջապահիկ ու ամենաառաջ-
նակարգ Քրեմն է ան աղտոտութեան : Բովանդակ աշխարհի մէջ
իր ունեցած յաջողութիւնը առաջ լերած է բազմաթիւ կեղծեր ,
որոնցմէ պէտք է խորշիկ ու խոյս առլ :

Քրեմ-Սիմոնը , քրեմափոշի Սիմոնը և Սիմոնի
օճառը կը գտնուին զեղարաններուն , անուշահոտու-
թեան վաճառատուններու և պաղարներու մէջ :

Դեմ տեսնի պէտք է լաւ լննել վաճառանքը՝ որ պէտք է ըլլայ
հոյի պահելիւն հիօս նմանը :





ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՐԵ ԱՐՄԷՆ

55ԲԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 7

5

ՅՈՒՆՎԱՐ 1908

“ՄԱՍԻՍ,,Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ 30 ՈՍԿԻՆՈՑ ՊԱՐԳԵԻԸ

Կատակ չէ՛, ո՛չ ալ լրագրական ո՛ր եւ է կերպ հնարք, **30** տկինոց այս պարզեւը, զոր տահմանած ենք մեր բաժանորդներուն, **Մասիսի** բաժանորդագրութիւնը միշտ հրապուրիչ և նպատուար պայմաններով օժտելու նպատակով: Ինչպէս կանուխէն յայտարարած էինք, այսօր կը ծանուցանենք մեր խոստացած այս հսկայ պարզեւը, զոր կրնայ ձեռք բերել **Մասիսի** ո՛ր և է բաժանորդ: Թէ ի՛նչպէս.—

Անոնք որ **Մասիսի** Բ. Տարեշրջանի սկիզբէն մինչև փետրուարի վերջը եղող ժամանակամիջոցին մէջ բաժանորդագրուած են, Թերթին կանխիկ վճարովքը վճարած ըլլալով, իրաւունքին մէջ կը գտնուին նպատուարուելու այս եզական ու Թանկագին պարզեւէն, որ ինքնին հսկայ արժէք մը կը ներկայացնէ: Այդ պարզեւն է ամբողջական շարքը անգլիական ծանօթ հսկայ Համայնագիտարանին, Encyclopædia Britannica, քսան հատոր, կազմուած, մատենադարանի շքեղ զարդ մը և Թանկագին մատենաշար մը, մեծապէս օգտուէտ: Բաժանորդներէն ա՛ն որ ճիշդ պատասխանէ մեր հետեւեալ հարցումին, պիտի ստանայ ամբողջական շարքը Համայնագիտարանին, որուն իրական արժէքն է, ամէն ծախքովը՝ **30** տկի: Թերթեհաւանները համոզելու համար՝ ըսենք Թէ՛ այս մեծագին պարզեւով ընթերցողը օժտելու զոհողութիւնը յանձն կ'առնենք՝ որովհետեւ զբաղանաւ մը մեծ գեղջով մը մեզի տրամադրած է Համայնագիտարանը:

Հարցումն է՝ ըսել Թէ, — պզտիկ ռեֆշաւ մը, եթէ կը ներէք, — **Եիներ** զիրքին ո՛ր էջերուն մէջ են հետեւեալ չորս տողերը, զանազան էջերէ անջատուած. —

մեղիկն հեռ, որպէս զի իրենց պիղծ

եօքը այցելութեան գացիմք իրենց

բարեբաղդութիւն մը նկատելու գայն

ինկած կը դառնար բաղաւ, գոհ ու զուար

Մնացածը յայտնի է՝ պայմաններու մասին: Փոքթա՛լ՝ ուրեմն՝ նպատուարուելու այս բացառիկ ու եզական առիթէն:

ՏԻԿԻՆԻՆ ՀՈԳԻՆ

ՏԻԿԻՆ ՄԵՆԾԵԱՆ, մանկամարդ, գեղանի, կինը ջոշ վաճառականի մը, որուն հետ իր զրամին ու գեղեցկութեանը ուժով ամուսնացած է։ Ինք և ամուսինը, երկուքը մէկ, կը պատկանին Հայ . . . հայ-լայֆին և աղ՝ իրենց ամբողջ փառասիրութիւնը, հաճոյքը, վայելքն է։ Իրենք զարդն են բոլոր Թատերական և գեղարուեստական հաւաքոյթներուն, և իրենց ներկայութիւնը, արդուզարդը՝ խօսքի նիւթ են։ Ոսկի կը Թափեն հագուստ-կապուստի և տունի պերճանքի համար։ Տիկինը առտուընէ խվեր զբաղած է զուրա ելլելու պատրաստութիւնով, զնուսներու համար, անգամ մըն ալ հաստատելու ճիգով ծառայայ Թատերական երեկոյթի մը մէջ թէ՛ ինք է՛ն ճոխ հագուստն է։ Չորս ժամ կ'ընէ որ զբաղած է արդուզարդով, և դեռ չէ աւարտած ան։ Կը վազվզէ մէկ սենեակէն միւսը, շարունակ բան մտնալով։

ՊԱՐՈՆ ՄԵՆԾԵԱՆ, հօրմէն ժառանգած հարստութիւնովը ջոշ, կալուածատէր ու կարգին գրուած փայլուն գործի մը մէջ, Երիտասարդութիւնը նոր լնկցուցած գեղեցիկ մարդ։ Շատ կը սիրէ կինը և կը հպատակի անոր ամէն քմահաղթներուն։ Մինչև Տիկինին դուրս ելլելը, զբաղած է ընծիքցումով, և շարունակ կ'ընդմիջուի Տիկինին մէկ կոչէն, իր բովը փութալու, ո՛ր և է չնչին հարցումի մը պատասխանելու համար։

«Պառարկման»ի մը միջին յարկը։ Դուռին զանգակը կը եմջուի։ Սպասուելին կը փութայ բանալ։ Հայ Վարդապետ մը կ'ողջունէ, դուռին առջևը գցուած։

ՎԱՐԴԱՊԵՏԸ.— Տէր և Տիկին Մհնժեանին բնակարանը ա՛ս է, չէ՞։

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— Այո՛։

ՎԱՐԴԱՊԵՏԸ.— Անշուշտ Տիկինը հոս է։

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— Այո, ի՛նչ պիտի ըսէիք։

ՎԱՐԴԱՊԵՏԸ.— Առանձին տեսնել կ'ուզէի, խնդիրի մը վրայ։

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— Ո՛ր տեղի քահանան էք և անուանի՞ր։ . .

ՎԱՐԴԱՊԵՏԸ.— Ո՛չ քահանայ . . .

Սպասուելին ներս սուրացած է արդէն, առանց վերջին խօսքը լսելու։

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— Տիկին, տէրտէր մը ձեզ կ'ուզէ տեսնել։

ՏԻԿԻՆԸ.— Ո՛ր տէրտէրն է, ի՛նչ կ'ուզէ, հիմա ժամանակ չունիմ ընդունելու, ըսէ ուրիշ օր մը . . . (պչրանալով) օ՜ֆ, ա՛ս ուրիշ էր . . .

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— Պէպի դուռը առաջանալով.— Հիմա ժամանակ չունիմ կ'ըսէ, ուրիշ օր մը։

ՎԱՐԴԱՊԵՏԸ.— անօրսնաւ.— Ըսէք որ ուրիշ ատենի կարելի չէ ձգել, կարեւոր խնդիրի մը համար եկած եմ։

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— աչալըջութիւն մը ունեցած ըլլալու փութկոտութիւնով.— Հիմա չի կրնար տեսնուիլ, ուրիշ ատեն մը, զբաղած է, ժամանակ չունի . . .

ՎԱՐԴԱՊԵՏԸ.— Դուք ըսէք ըսածս, երկու վայրկեան, երկար բան մը չէ խօսելիքս։

ՅՊԱՍՏԱՆԻՆ. — Տիկի՛ն , չերթար կոր , ըսելիք ունիմ կ'ըսէ . . .
ՏԻԿԻՆԸ. — Օ՛գ , ի՛նչ զարմանալի մարդիկ են ասոնք , չե՛ն հաս-
 կնար որ զբաղած եմ , չեմ կրնար տեսնուիլ , ասեն չունիմ . . .

Առնեալ , մասնեովը մագերուն փայփայանմ մը տալով , դէպի դուռը
 կ'ուղղուի , ուր կը մնայ Վարդապետը ոտի վրայ , առանց ներս մտնելու :

ՏԻԿԻՆԸ. — շփացած շարժումներով , անապարկոտ , ժամ առաջ
 նախքեզ միտքով . — Ո՛ւր տեղէն էք , տէր հայր , ի՛նչ կ'ուզէիք :

ՎԱՐԴԱՊԵՏԸ. — Ներեցէք , տէրտէր չեմ , վարդապետ , * * * * Վար-
 դապետ . . .

ՏԻԿԻՆԸ. — Հասկցանք , վարդապետ թող ըլլայ , ի՛նչ կ'ուզէիք :

ՎԱՐԴԱՊԵՏԸ. — Քանի մը վայրկեան կրնայի տեսնել ձեզ առանձին :

ՏԻԿԻՆԸ. — Կեղծ համեստութիւնով . — Առանձին , ի՛նչ կրնաք
 ունենալ առանձին ըսելու , ըսէ՛ք , հո՛ս ըսէք , մնաց չունի :

ՎԱՐԴԱՊԵՏԸ. — Ոտքի վրայ ըսուելիք բան մը չէ , առանձին
 կ'ուզէի տեսնուիլ , կարելի չէ՞ երկու վայրկեան սենեակնիդ խօսէինք ,
 անշուշտ պարոն ամուսիննիդ հոս չէ :

ՏԻԿԻՆԸ. — մտաւաճ . — Տէր ողորմեա , ամուսինիս հոս ըլլալը
 կամ չըլլալը ի՛նչ կը հարցնէք , չըսէ՛ք հոս՝ ինչ որ պիտի ըսէք :

ՎԱՐԴԱՊԵՏԸ. — յուսահատած . — Ձեր գերդաստանին բարեհաժ-
 բաւ անունը ծանօթ ըլլալով և ճանչնալով ձեր բարեխրա զգացում-
 ները , համարձակեցայ ձեզ ալ գիմուս ընել՝ մեր թաղին գալոցին նորո-
 գութեանը համար նպաստ մը խնդրելու . . . ի՛նչ որ բղխի ձեր սիր-
 տէն . . . անշուշտ չպիտի մերժէք . . . ծանօթ է մեզ թէ որչափ հո-
 գածու էք այս տեսակ բարենպաստակ ձեռնարկներու . . .

ՏԻԿԻՆԸ. — Հասկցա՛յ , հասկցա՛յ , ատանկ բաներու խելքս չի հաս-
 նիր , ես չատ չեմ խառնուիր ատանկ գործերու , ո՛վ է ըսեր որ հոգա-
 ծու եմ եղեր , մինչև հիմա ատանկ գործի դրամ տուած չունիմ ես ,
 արդէն չեմ հասկնար որ ինչ ընելու գիտնամ . ինծի՛ ինչ , գալոց պիտի
 չինէք նէ՛ թող թաղականն աղաները , եկեղեցիին մարդիկը մտմտան
 առիկա , ի՛նչ գիտնամ , գալոցը կրնորը չպիտի չինեն ես . . . հա՛հա՛հա . . .

ՎԱՐԴԱՊԵՏԸ. — Բայց ես ձեր ընտանիքին անուանին է որ կը գիմեմ
 ձեզի , և չեմ կարծեր որ յուսախաբ կ'ընէք զիս , ձեր գերդաստանին
 վրայ դրուած յոյսերը ի դերեւ հանելով :

ՏԻԿԻՆԸ. — Շիտակը , գերդաստանը մերդաստանը չեմ գիտեր ,
 բան մըն ալ չեմ կրնար տալ , ես անանկ պէտքեր ունիմ որ . . . աւելի
 դրամ ունենամ նէ՛ . . .

ՎԱՐԴԱՊԵՏԸ. — Գոնէ պղտիկ բան մը , ոսկի՛ մըն ալ չէք հոս իրեր
 այս տեսակ գործի մը . . .

ՏԻԿԻՆԸ. — Ոսկի՛ . . . մը . . . ադ ո՛րչափ քիչ է եղեր ուղած-
 նիդ . . . մէծիտ մըն ալ չէ՛ տէ՛ . . . ոսկի՛ մը , ո՛ւր է ոսկին , հայր
 սուրբ , ո՛ւր է . . .

ՎԱՐԴԱՊԵՏԸ.— Է՛, չատ լաւ , մէճի՛տ մը . . .

ՅԻԿԻՆԸ.— Ո՛չ, ո՛չ, խնդրեմ զբաղած եմ, ոտքի վրայ ալ մտցայ, դռնին բերանը, ուրիշներու նայեցէք , ուրիշներու . . .

Վարդապետը կը մեկնի, գլխահակ, ամօքահար , վրդափուած մերժուելու ջլառիչ գգացումէն :

Տիկինը անմիջապէս դուռը գոցելով Վարդապետին ետեւէն, կը փութայ զարդասենեակը , կէտ մնացած արդուզաւորը աւարակու : Վարդեան մը ետքը , միտքը բան մը իցնալով , ամուսինին վրայ կը վազէ :

ՏԻԿԻՆԸ.— Բնակնի՛ր ու պչրագուարճ շարժումներով.— Առտուան տուած վեց պանքնօդէ չօգտեր, ինծի չորս պանքնօդ ալ տուր , պաշօի փօքքիւնս լմնցած է, երթամ առնեմ պիտի , ան ալ մէկ օրուան ըսն է ամա, ի՛նչ է նէ . . .

ՊԱՐՈՆ ՄԵՆԾԵՍԱՆ.— Դրաւնապանակը բանալով.— Ոսկի չըլլա՛ր , աւելի աղէկ , մանտրուք է , քսան հատ չպիտի ըլլայ քովս , բայց անգլխական է, աւելի աղէկ քեզի , նորէն շահեցար , ա՛ռ Ան տէրտէ՛ր էր , վարդապետ էր , աղէկ ըրիր ճամբեցիր :

ԵՆՈՎԻՑ ՍԵՅԻՆ,

1907Ի ՅՈՒՇԱՏԵՏՐՍ

Ժապաւէններով կապուած նրբոյր,
Յուշատետրներս անցեալ տարիի,
Գորոցիս խորը պահած եմ բոլոր,
Որոնց ծաղիկն մէջ կեանքս կը պանուրի :

Ու կ'ուզեմ անոնց կրցել իմ վերջին
Յուշատետրս զոր ձեռքս բռնած եմ.
Կը քորատեմ զայն խանդաղատեցիկ
Վերջացող տարուան այս իրիկուան դէմ :

. . . Եզուր կը ջանամ գտնել տնօր մէջ
Իրեն գոյութեան իրաւունքն արդար,
Ոչ մէկ իրական եղանկաւորեան էջ
Որ ինծի խռիկի կամ երազել տար :

Ու կը դարձրեմ քերթերն տնկամբեր,
Դռնելու համար, անկիւնէ մը գէթ ,
Գոհունակութեան ծպիս մը տարբեր.
Ապրուած կեանքի ցոլքն երանաւէտ :

Մեղամաղձութեան ստուեր մը կու գայ.
Դէմքս գունատել ցաւաւանջօրէն,
Ու խօյ բախով մը, քէւ ախմայ,
Անոր քերթերը, լո՛ւռ, փերթելէն,

Կը յանձնեմ բոսոր , հարնառող բոցին,
Որ իր երեղէն, բոբը լեզուակներով,
Կ'ուտէ, կը լալիէ — հանո՛յ՛ք բնածին—
Կեանքիս անօգուտ տարին այրելով :

ՊԵՐՃՈՒՀԻ ԵՍԶԸՃԵՍՆ

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ ՆՇԱՆԱԻՈՐ ԴԵՄԲ ՍԸ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂԻՄԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ

Բոլոր անոնք որ մեր ապագրութեան պատմութիւնովը շահագրգռուած են, զը յիշեն անշուշտ անունը այս իրապէս Վարդապետին՝ որ մեր մտաւորականութեան մէջ իր յատուկ տեղը ունենալու իրաւունքը աւելի: Ոսկան Եպիսկոպոս Երեւանցիի գործակից այս անձը, որուն անունը յաճախ յիշուած է Ամսթերամ տպուած զրքերու յիշատակարաններուն մէջ, նոյն իսկ կարապետը եղած է մեծ Վարդապետին՝ Ոսկանին, անկէ առաջ փութալով Հոլանտա և հոն մինչև Ռսկանի գալը ինքը մատակարարելով Ամսթերամի տպարանը: Այս անձնաւորութեան անշուք և աննշմար գերեզմանը ինծի վիճակեցաւ գտնել 1905 մայիսի մէջ՝ Ադրիանուպոլիսի ընդարձակ գերեզմանատունին՝ եկեղեցականներու յատուկ բաժնին մէջ, անընթեռնելի ըլլալու աստիճան հին տապանաքարով մը, ուր միայն վեղար մը և գաւազան մը կ'երեւային յատկանշական և ուշագրաւ: Երբեմն՝ անցեալին մէջ ծանօթ անուն մը ունեցող անձերու վերաբերող յայտնութիւններ, մեզի կը պատճառեն մասնաւոր հաճոյք մը, մեզի ծանօթացնելով անոնց կեանքէն այն տեսակ մանրամասնութիւններ և յայտնելով այն տեսակ պարատնայ՝ որոնք մութը կը մնային: Տարտամ, անորոշ և անկապ գաղափարներ մարմին կ'առնեն, գործին՝ գործիչին հետ ունեցած կապը կը ճշդուի, կեանքի զանազան դրուագներ երեւան կ'ելլեն և մարդը կը մարմնաւորուի և կը կենդանանայ մեր աչքին առջև: Ադրիանուպոլիսի գերեզմանատունին մէջ կարապետ Վարդապետի անշուք գերեզմանն ալ այդ տեսակէտով շատ բան կը խօսէր, պարզելով քիչ և շատ կեանքը մարդու մը՝ որ մեր մտաւոր լուսաւորութեան գործին ամէնէն եռանդուն աշխատողներէն մէկը եղած էր: Թողունք որ իր տապանաքարը խօսի:

Այս է տապան դիր հանգստի
Որ ումեմն մեծի վարդապետի
Կարապետի տպագրողի
Էր յաշակերտ Տեառն Ոսկանի
Կրկին լեզուիս թարգմանողի
Լեալ առաջնորդ Ադրիանուպոլիսի
Բայց ոչ երկար ժամանակի
Այլ և միայն իբր ինն ամսի
Վաթսուն ամօք հողմ տանի
Որ է այսու գերեզմանի,
Հազար հարիւր եռեսուն հնգի [=1135+551]=1686
. . . թվականի
Յիշեալ լիլիք Հայր մեղայիւ:

Այս գերեզմանը յայտնութիւն մըն էր ինքնին, որովհետեւ ոչ միայն երեւան կը հանէր կեանքին քանի մը մութ գիծերը մեր մտաւորականութեան աշխատութիւններէն մէկուն, այլ ցոյց տալուն համար տեղ մը՝ ուր կը մնայ մարդու մը հետքը, գերեզմանը, որ մինչեւ հիմա անյայտ կը մնար, ինչպէս է իր մեծ Վարդապետին՝ անմոռանալի Ոսկանի գերեզմանը, որ կ'երեւայ թէ իր մահէն վերջն ալ հալածուած է անոնցմէ՝ որոնք մեր տգիտութեան մէջ տեսած են իրենց շահը և ամբար աշխատի սաստկութեամբ հալածած են Ոսկանը և իր մեծ ու նշանակելի գործը՝ Հայ Տպարանին գոյութիւնը :

Սակայն ո՞վ է Ոսկանի աշակերտ այդ մեծ Վարդապետը : Ժե. Դարը մեր գրական կեանքին համար նշանաւոր հանգրուան մըն է : Այդ դարուն մէջ նոր ջանքեր ու աշխատութիւններ տրուած են, մարմին տալու համար Հայ տպագրութեան : Այդ փափաքը ընդհանուր էր և ձգտում մը կար արդէն կանուխէն սկսած : Զուլա՝ այդ դարուն փառաւոր յրջան մը կը բոլորէր : Իր վաճառականները հաճառաւոր դիրքի մը հասած էին, գրեթէ հին աշխարհի բոլոր գլխաւոր շահատաններուն հետ յարաբերութեան մասնելով : Այդ յարաբերութիւնները մոռնալ տուն մտաւոր լայն ըմբռնումներու և աշխարհայեցողութեան, ինչ որ մղեց Զուլայեցիները նաև մտաւորական զարգացումի ձեռնուռ աշխատութիւններու : Եւ իրապէս եթէ մանրադնին կերպով կարելի ըլլար այդ աշխատութիւններուն բոլոր ներքին թելադրող ազդակները երեւան հանել, պիտի տեսնուէր թէ Զուլայեցի վաճառականները անմահ դեր կատարած են այդ դարուն միտքի աշխատութիւններուն մէջ :

Սաշատուր Կեսարացի՝ Զուլայի վանահայրը՝ ազդուած անշուշտ իր հօտին փափաքներէն՝ փորձ մը ըրած է հիմնելու տպարան մը Ամենափրկիչ վանքին մէջ, որ սակայն մտաւորական ամէն կեդրոններէ հեռու խիստ անյարմար մէջալայր մը կը ներկայացնէր այդ տեսակ ձեռնարկի մը համար : Սակայն երբ իր աշակերտներէն Զուլայեցի Յակոբ կաթողիկոս հայրապետական աթոռ կը բարձրանայ [1655-1680], իր վարպետին գաղափարին զարկ կու տայ աւելի գործնական ծրագիրով մը : 1656ին Եւրոպա կը զրկէ իր նախորդին՝ Փիլիպպոս Աղբակեցիի քարտուղարը և սպասաւորը Մատթէոս դպիր Ծարեցին : Անիկա՝ ինչպէս իր նախորդները, իր քայլերը կ'ուղղէ նախ դէպի Վենետիկ և Հռոմ, ուր որ և է դիւրութիւն չգտներ, այլ ընդհակառակը հաւատաքննական փորձութիւններու կ'ենթարկուի : Երբ Իտալիայի մէջ աշակցութիւն գտնելէ կը յուսահատի, կ'երթայ այն տեսակ երկիր մը՝ ուր կաթոլիկ Եկեղեցին ազդեցութիւն չունէր և ուր Հայ Զուլայեցի վաճառականներու ոչ նուազ կարեւոր դադութ մը հաստատուած էր : Այդ երկիրն էր Բողոքական Հոլլանտայի համբաւաւոր քաղաքը՝ Ամսթերտամ, որ Ժե. Դարուն սկիզբը յանկարծական բարգաւաճումի մը հասած էր : Ծարե-

ցին՝ հոն՝ հաւանականաբար աջակցութիւնովը Զուլայեցի , Ագուլիսցի , Նրեանցի և Մեղրեցի վաճառականներու՝ կը յաջողի հաստատել տպարան մը, 1660ին և կը ձեռնարկէ տպելու Ներսէս Շնորհալիի Յիսուս Որդին, որուն առանց աւարտումը տեսնելու կը մեռնի 1661ի սկիզբը՝ տպարանը Աւետիս Դլիջենց Երեւանցի վաճառականին վրայ դարձնելէ ետքը։ Այդ վաճառականը տպարանը կը նուիրէ Էջմիածինի Աթոռին , զայն անուննելով «Ս. Էջմիածինի և Ս. Սարգիսի տպարան» : Սակայն Աւետիս չափաւոր ծանօթութիւններով վաճառական մըն էր, անհմուտ դպրութեան , սակայն կարող կ'ըլլայ գլուխ հանել Յիսուս Որդին 1661ին կը տպագրէ նաև համառօտ Ժառնագիրք մը , միւս կողմէ դիմելով նաև Էջմիածին իրեղբորը Ոսկան Վարդին, որ իրեն աշակերտ Կարապետ Վարդ. Աղբիանուպուսեցին կը զրկէ Ամսթերամ , տպագրական աշխատութիւններու հսկելու և մանաւանդ սրբագրելի պաշտօն կատարելու համար։ Այս իրողութիւնը կը հաստատուի 1661ին տպուած Սաղմոսին յիշատակարանէն , ուր ալ Աւետիսը մինակ չենք տեսներ , այլ Կարապետ Վարդապետին նետ, որ իսկ և իսկ խմբագրողն է այդ յիշատակարանին [1] : Ասկէ դուրսն է հետեւեցնել թէ՛ Կարապետ Վարդ. Էջմիածինի միաբան մը եղած է և թերևս նոյն իսկ մանկութենէ նոյն վաճառքին մէջ ուսում առած է . որովհետեւ իր պաշտօնին նայելով՝ պէտք էր՝ հմուտ ըլլար Հայ լեզուին , Կարապետ Վարդ. գործակցած է նաև մեծ Ժառնագիրքի մը [1662] տպագրութեան գործին : 1662ին Յակոբ Կաթողիկոսի կարգադրութիւնով՝ Ոսկան Վարդ. Դլիջենց Երեւանցի՝ կը նշանակուի Էջմիածինի նուիրուած այս տպարանին պիս : Ոսկան Վարդ. որ մտադրած էր Աստուածաշունչ մը տպել , կ'որոշէ Ամսթերամ երթալէ առաջ Խաւրիաի մէջ աշակեցնել փնտուել : Ասոր համար Զմիւռնիաէն նամակ կը գրէ իր աշակերտին՝ Կարապետ Վարդապետի , յանձնարարելով որ՝ գործը երեսի վրայ չձգէ մինչև որ ինքը դայ : Կարապետ Վարդ. այդ յանձնարարութիւնը լիովին կը կատարէ և նոյն իսկ կրնայ ըսուիլ թէ չէ թէ միայն գործը չլքաներ , այլ քայլ մըն ալ առաջ կ'անցնի , ձայնագրուած Շարականի տպագրութեան ձեռնարկելով : Ասիկա պատրաստել կու տայ եկեղեցական ձայնանիշերը և կը սկսի այդ գործին, որ Հայ տպագրութեան մէջ նորութիւն մըն էր և տպացոյց մը նաև Կարապետ Վարդ.ի նշանակելի կամքին և աշխատութեանը : Նոյնպէս 1666ին , Ոսկան Վարդ. Լիվոռնիաի մէջ իր եղբորը հետ տեսնուելէ և այն անկ հաստատուած երեք Զուլայեցի վաճառականներու՝ Էջմիածինի, Երուսաղէմի և Ս. Սարգիսի վաճառքներուն՝ նպաստին Աստուածաշունչի

[1] «Ներտպարանում որ հաստատեալ եղև ի նախանշանակեալ Մատթէոսէ սարկաւագէ , յերկրին Հոլանտիո ի քաղաքիս յԱմսդէլտամի , որ կոչի աշխարհ Ֆրամէնկի , տպաստորութեամբ և սրբագրութեամբ անարհեստ և անփմտտ և անպիտան Կարապետի Աղբիանուցոյ և բանին սպասուորի , աշակերտի մեծի րարունապետի Տեառն Ոսկանի Երեւանեցոյ» :

ապագրութեան ծախքը յանձն առնելու խոստումը ստանալէն ետքը, կը հասնի Ամսթերդամ: Հոն նախ կը տալէ Այքսելհարսն մը, յետոյ՝ Կալարալէ Կարապետ Վարդ.ի ձեռնարկած Շարականի տպագրութիւնը, զոր մինչեւ «Կարգ Համբարձման»ը հասցուցած էր Ագրիանուպոլսեցի Վարդապետը: Յետոյ կը ձեռնարկէ Ոսկան՝ Աստուածաշունչի տպագրութեան հսկայ գործին, որուն գծուարտ թիւնները իբր աննախընթաց գործ՝ թուելու պէտք չկայ: Տպագրութիւնը կը տեւէ երկու տարի [1666-1668], եւ այդ երկար աշխատութեան մէջ Կարապետ բաժին մը կ'ունենայ նաեւ Կարապետ Վարդապետ:

Ոսկան 1666էն մինչեւ 1670՝ չորս տարուան ընթացքին մէջ կը հրատարակէ տասնութ թիւ գիրք, որոնցմէ մեծ մասը եկեղեցական մատենաներ են, Սաղմոս, Ժամագիրք, Մաշոց, Նոր Կտակարան [1], իսկ մէկ պզտիկ մասն ալ զանազան գործեր, ինչպէս են իր թարգմանած և խմբագրած Քերականութիւնը [1666], Առաքել Դարիժեցիի Ժամանակագրութիւնը [1669], քերթողաձօր վերագրուած Աշխարհագրութիւնը եւ Աղոռնագիրքը միացած [1667], Տոմարագիրքը [1668], որոնց ամէնուն ալ գործակցած է Կարապետ Վարդ. Ագրիանուպոլսեցի: Իսկ 1666ին տպուած Քրիստոնեական մը՝ որուն մէջ չնչուր Ոսկանի անունը՝ գործն է Կարապետ Վարդ.ի և Թէոդորոսեան Պետրոս անուն անձի մը, ինչպէս կ'երեւայ գիրքին կողքէն՝ ուր կը կարգացուի. «Վարդապետութիւն քրիստոնէական ըստ Հայոց, տպագրեալ առ Հռոմայեցի», միջնորդութեամբ Կարապետի վարդապետի Ագրիանապոլսի և Թէոդորոսեան Պետրոսի Սիմպրի: Յ'Ամադէլօտամ, ծախիւք և տպագրութեամբ թարգմանողաց»: Ոսկան 1670ին իր տպարանը կը փոխադրէ Լիվոռնօ և անկէ 1673ին Մարսիլիա և քանի մը հրատարակութիւններ ընելէ ետքը, կրօնական նեղ ըմբռնումներու պատճառով՝ դժուարութիւններու կը հանդիպի և 1674ին կը վախճանի Մարսիլիայի մէջ:

Կարապետ Վարդ. կամ Ոսկանի մահէն անմիջապէս կամ Մարսիլիայի տպարանի փակումէն [1683] ետքը [2] դարձած է իր ծննդավայրը՝ Սակայն աւելի հաւանական է կաշմել թէ Ոսկանի մահէն ետքը թողուցած ըլլայ տպարանական աշխատութիւնները, որովհետեւ Ոսկանի մահէն ետքը Մարսիլիա տպուած գիրքերու յիշատակարանին մէջ չէ յիշուած իր անունը, մինչ Լիվոռնիայի տպարանին մէջ տպուած երկու գործերուն մէջ կը յիշուի Կարապետ Վարդ.ի անունը: Այսպէս, 1670ին Լիվոռնիա տպուած Բեւլարմիոսի Քրիստոնեականին թարգմանութեան յիշատակարանին մէջ գրուած է «Տպագրեցաւ տառս Աստուածային յամին որ ի ծննդենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հաղար և վեց հարիւր և եօթանասուն . . . յԱլիկոռնայ, ի փառս մեծագոյն Աստու-

[1] Ասոր յիշատակարանին մէջ կը բացատրուի Թէ՛ աւարտեցաւ այս գիրքը «երկասիրութեամբ նուաճտ Ոսկանի եպիսկոպոսի . . . ի տպարանի աշակերտին խնայ Կարապետի բոնի սպաստորի . . . բայց իմովք գրովք, իսկ արդեամբք երկոցունց . . . բուն նախաբանի պատուովք ինչ է իմով ձեռամբ գծեալ Նոր Կտակարան . . .»: Այս գիրքին Թուականն է 1667, ուր կ'երեւայ Թէ տպարանը պահ մը Կարապետ Վարդ.ի սեփականութիւնը դարձած է, ինչպէս այս յիշատակարանէն կը հասկցուի, կամ Կարապետ Վարդ.ն ալ անշատ տպարան մը ունեցած է:

[2] Սողոմոն Լեւոնեան, Նախիվ Գրիգորեան և Մատթէոս Վանանդեցի իր գործը շարունակած են մինչև 1883:

ծոյ ներապարանում Սրբոյ Էջմիածնի, հաճութեամբ Տեառն Ոսկանի Արքեպիսկոպոսի Հայոց : Սրբազրութեամբ Կարապետի վարդապետի Աղբիւնացւոյ» : Նոյնպէս այն տեղ տպուած Պարսեզ Հոգեւորին մէջ կը կարդացուի «Աւարտեցաւ գրքոյկս որ կոչի Պարսեզ Հոգեւոր ի թուին ՌՃԻ. հաւանութեամբ Տեառն Ոսկանի Երեւանցւոյ և սրբազրութեամբ Կարապետ վարդապետի Աղբիւնացւոյ, Լիպունի որ է Լիվոնոյ» : Կարապետ Վարդ. Աղբիւնուպոլսեցիի Լիվոնիա գտնուած առենք իրեն աշակերտած է Մատթէոս Յովհաննէսեան Վանանդեցի՝ որ իրմէ տրված էր տպագրութեան արուեստը : Մատթէոս մեծ ծառայութիւն մատուցած է, ետքէն տպարանը տեղափոխելով դարձեալ Ամսթերտամ և անվհատ աշխատութեամբ շարունակելով Ոսկանի պանծալի գործը, որուն մէջ, ինչպէս տեսնուեցաւ, Կարապետ Վարդ. ի ալ դերը աննշան չէր եղած : Բացի տպագրական գործին ընծայած աշակցութենէն, ինչպէս կը տեսնուի ժամանակին աւերոյ ճիրաններէն փրկուած յիշատակարանէ մը, Կարապետ Վարդ. նաեւ Ամսթերտամի Հայ գաղութին եկեղեցական հոգեւոր գործերուն ալ ուշադիր գտնուած և զանոնք հոգեւոր խնամքներու տաքիկայ ըրած է : Ինքն է հաւանական հիմնադիրը Ամսթերտամի Ս. Կարապետ եկեղեցիին ^[1] որ ետքէն երկու անգամ մեծ նորոգութիւններ կրած է և ընդարձակուած՝ գաղթականութեան բարգաւաճումին հետ : Այդ իրողութիւնը կը հաստատէ Մարտիրոսի Հնութիւններու Թանգարանին մէջ պահուած քառակուսի սեւ մարմարին քարը՝ որուն վրայ քանդակուած է սա արձանագրութիւնը, մաքուր բոլորադիրով մը.

Ի թըվին ՌՃԹ. մայիս Ի Գ. [1663]

Ի քաղաք յԱմսթերտամ

Արդեամբ Զաքարի որդւոյ

Դաւթի ձեռնայեցւոյ : Եւ

Ենթադրութեամբ Կարապետի

Բանի սոցատուրի կազմեցաւ

Վէմս Օլլանտիւս Սուրբ Կարապետին ^[2]

Այս քարին վրայ քանդակուած խաչերը ցոյց կու տան թէ՛ անիկա կա՛մ վէմ-քար մըն էր կամ հիմնաքար՝ մը, ՝ զետեղուած Կարապետ Վարդ. է մը՝ որ՝ մեծ հաւանականութիւնով՝ Աղբիւնուպոլսեցիէն զատ մէկը չի կրնար ըլլալ :

Կարապետ Վարդ. Հոլլանտաի և Լիվոնիաի մէջ, այնչափ գործած իր ծննդավայրին մէջ՝ այնչափ կարճատեւ պաշտօնավարութիւն մը ունեցած է, որ գրեթէ իրմէ որ և է նշանակելի հետք չէ մնացած Էտիրնէի մէջ, լայն իր գերեզմանէն, որ իբր տգիտութեան ժամանակներու մէջ միաքի լոյս խնդրող և իր ժողովուրդը դէպի մոռադրական զարգացում առաջնորդող մարդու մը գերեզմանը իր նշանակութիւնը ունի, ամէն անոնց համար՝ որոնք զիտեն զնահատել Ոսկանի և իր հետեւորդներուն գործերը :

ԱՐՇԱԿ ԱՆՊՈՅՍՃԵԱՆ

[1] Այս եկեղեցին Դէորդ Դ. Կաթողիկոսի նրամանով ծախուած է :

[2] Հրատարակուած Տօթ. Թորգոմեանի կողմէ :

ՏՐՏՈՒՄ ՈԳԻ . . .

[ՍԵՐԵՐԳ]

Թափառամոյ ամառու վրայ վերսոյի,
Տրտնւմ Ոգի, ահա դարձեալ գըսայ վեզ,
Հո՛ն ուր վեզի օր մը միմա՛կ ես րոյի,
Բարին վրայ, աղբիւրին մօտ, կը յիշե՛ս :

Մեր հրաժեշտի օրէն ի վեր դուն այսպե՛ս
Հեռուն յառած մուր աշկերչոյ սեւածիւր՝
Ողբակցիւր ամառու վրայ տրտնալեւ,
Ու արցունքի լսիկ ե՛րգը միշտ լացիւ :

Ես հեռացա՛յ տատարին մէջ խօշարար,
Իմ երազիս ամառաներէն անդադրու՛մ,
Դիշերներու հովիւ հման խօշապար,
Վերջալոյսի՝ քուններուն պէս տրտնւմ :

Ու վագեցի — անուրջներո՛ւ ուխտաւոր —
Թաշիշին վրայ կեանքի ծիծղուն մարմանդին .
Ու վերջերու ծաղիկները ախտաւոր
Տարի միկելու հորիզոնները մութին :

Ես խոյացայ՝ ճուղորդե՛ս սեղանիս
Հո՛ն ուր նիւար ամուսգայր մը կայ յոյսի,
Հո՛ն ուր սիրոյ վրէժի երգ մը կը դողար,
Հո՛ն ուր դողող ծիածան մը կար յոյսի . . . :

Ու քեւարե՛կ ահա վեզի՛ կը դառնաւ
Երջանկութեան ամառաներէն յեւարած,
Տրտնւմ Ոգի, հոգւոյս միակ քարեկամ,
Դուն իրակա՛ն, դուն մշտնա՛րհ, դուն անդա՛ր :

Ձեռներու մէջ դիւ ձեռներոյ մահաբոյր,
Ու հողեղէն շրթնակներդ շրթնակիս .
Երակներու մէջ՝ քու շունչոյ տրտնալոյր,
Արցունքներու քիւրեղին մէջ՝ իմ հոգիս . . . :

Տրտնւմ Ոգի, քեւոյ քեւիս գալարո՛ւն,
Հաւաքի մը անհունին մէջ սրգաւեօ,
Մեր ցաւերուն, արցունքներուն, վերջերուն
Պատարագը պիտի տկենք վեզի հետ . . . :

Ռ. ՍԵՐԵՐԳ

ՅՈՒՇԱՏԵՏՐԻ ԷԶԵՐ

Մեր կեանքին կարճ երկարաձգումին մէջ՝ երբ թզլթառնք երեսները անոր սիրային պատմութեան , կը հանդիպինք ցողերու՝ որոնք տակաւին յոյսերով կը թրթռան , դիմերու և կէտերու՝ որոնք բան մը ըսել ուզած են , և բաւերու՝ ընդհնամարտող ու տոգոյն սիրտին մէկ անկիւնը կամ արցունքոտ ծալքի մը մէջ ինկած , մոռցուած Ասանք հա-
խերգանքներն են դէպի Պատրանք մը սլացումին կամ ազազանները խռտափող կեանքի երազի մը ետեւէն , որ չի գար , որ ա՛լ պիտի չգայ : Եւ ասոնց մէջ լէպեր կան կիսկատար մնացած , ճերմակ պարտող երեսներով , արհաւիրքի մը ցրտութիւնը պատցնելով գրուած էջերուն ան-
ծանօթին մէջ և խորհրդապատկերելով՝ յաջորդող յուսախաբութիւն մը , որ կ'երկարի , կ'երկարի . . . :

Այն օրը ուր մարդը իր հետզհետէ լայնցող յոյսերուն , իր հետզհե-
տէ ծաւալող տրտմութիւններուն խոշոր հակադրութիւնը զգաց սիրտին մէջ , աչքերուն նայուածքը սարսափ նշանակութիւն մը նշուէց , հոգին սառուցիկ սարսուռով մը դղրդեցաւ և իրականութիւնը տեսաւ , փո-
խանցումի հսկայ վիճակ , որ չլացումէն դէպի հոծ մթութիւնները կը տա-
նի : Եւ ալ իրեն համար իր խորհուրդները և դատելու կերպերը , իր լուսարանելու , հասկնալու , համոզուելու ճիգերը , տարբեր սահման մը աւելին , և կեանքին՝ Նեոտի պատմութեան ըրաւ խորունկ , անողո՞ք իրա-
կանութիւնը : Ըմբռնեց , ընդունեց ու լացաւ . ու նախախնամական անդառնալի որոշում մը՝ մագեր ճերմկցուց իր գլուխին վրայ , ծաղիկ-
ներ փետտեց իր սիրտէն , կամ զարմանալիօրէն ճակատագրային հակա-
դարձութիւնով մը , խօլ երգեր պատեցուց անոր չրթունքին վրայ ու փետուրի թրթռումներ դրաւ անոր հոգիին մէջ . . . : Բայց հակադատ-
կերը ա՛յն ուղեգիծին՝ ուրկէ կ'ընթանար՝ զինքը չփոխեցուց . աչքերը , աղերսարկու , ա՛լ ամբողջ նայուածք եղան ու միտքը՝ ամբողջ ձգտում , ամբողջ խուզարկութիւն : Եւ օր մըն ալ , յուսահատ փնտռումներէ ետքը , բարեկալքը գտաւ , բարեկամութիւնը ստեղծեց . . . : Ա՛յ հա-
ճոյքի , զբօսանքի , կամ մխիթարութեան ու խանդաղատանքի հոմանիշ կարծեց զայն . անոր անունովը երգ մնաց , անոր երեսումովը յուսաց : Զայն հրաւիրեց ստանձնելու Դեր մը՝ սրուն կոշումին ու կատարումին յաջողութենէն պիտի ծնէր իրեն համար ալ օգուտ մը . ապշահար զմայ-
լանքներ ունեցաւ անոր անշահախնդրութեան , անոր անկեղծու-
թեան առջև . . . : ա՛յնչափ՝ որ այդ նոր մարդը , իբր իր միւս Ետը , խանդավառ պաշտամունքի մը արժանացումովը պանծաց . . . :

Ամէն գարուն իր ծաղիկ-յոյսը կը խառնէ մեր սիրտերուն անուշ ստուերին . և ամէն տեղեւածափ - քամիի ամիս - իր չոր դեղին տե-
րեւը կը քշէ այդ ստուերին տակ , իրարու անձանօթ երկու ներհակ

պատկեր գծելով հոն Գարունը Զարթօնքն է կեանքին մեծ առտուան և սկիզբը մեր երազներուն յիշատակին: Էն առջի երեսները կը լեցնէ ան մեր խոհանքներու, բարախումներու և արցունքներու վէպին: Հոն ձեռք ձեռքի տուած՝ երեւոյթներու և անցքերու լայն պարը կը պարէ: Այսօր յիշատակ մը կը ծփայ մեր երեւակայութեան մէջ և անոր հետ կատուած կը տեսնենք անխուսափելի բարեկամը, իր ծիծաղկոտ կամ տխուր հոգիով, իր յատակ կամ աթարգմանելի միամտութիւնով: Բարեկամը՝ ամէն տեղ, մեր քայլերուն առջեւ, մեր շուրջը, մեր կեանքին վէպէտու-մին, մեր սիրտին մէջ . . . :

— Vois-tu, il n'y a que trois choses en la vie, l'amitié, l'amour et...

Համակրանքի յուզում մը չէ՞ք զգար այդ լքուած ու մարդկութեանէն չհասկցուած Միւրթէին՝ La Vie de Bohèmeի հեղինակին համար, որ իր էն վերջին վայրկեանին, կեանքին գոհնի՛լ վախճանէն դէպի մեծ, անծանօթ վախճանը ըրած ուղեւորութեան միջոցին, թերեւս աչքերը արօտաբազօժ ու թերեւս սիրտն ալ հատած պղպուտն նշոյլով մը, իր էմէ Միլլէ բարեկամին հոգիին՝ կ'ուզէ իր ամբողջ կեանքին ամէնէն իրական և ամէնէն նուիրակա՛ն սղաղբութիւնը . . . : Բարեկամութիւն, սէր և... Ունայնա Ալտրի՛շ, Յուսահատեցուցիչ ներդաշնակութիւն մը չկա՞յ այդ երեք բառերուն—երեք անհուն իմաստներուն—երբեակ անհունին միջև: Բարեկամութիւնը որ կը խանդաղատեցնէ, Աէրը որ երանութեան մտածել կու տայ և Ունայնը ուր կը յանդին անո՛նք . . . : Եւ ուղղակի այդ երեք վիճակներէն կամ հանգրուաններէն չե՞ն ըլլար արդէն մեր ամէն օր կարդացած զանազան վէպերը, այդ ամբողջ հաւաքածոն գոյնզգոյն երեւակայութիւններու ամփոփումին կամ գերասուր իրականութեան դէմ ընդվզող խօլ բողոքներուն . . . : Ան ի՛նչ լլկիչ, հոգեխառով խոստովանութիւն՝ զոր իր վերջին շունչին ու սարսուռին հետ կը փախայ այդ երազո՛ւն Միւրթէն: Իրեն համար ի՛նչ թանկագին իմաստ մը՝ դադափարը անզուգական բարեկամութեան, այդ հրեշտակ-քոյրը Սէրին, միւս մեծ խորհուրդին . . . : Ու երեւակայել թէ՛ ոչինչին հետ գրկուելու վսեմ պահո՛ւն անգամ և մանաւա՛նդ՝ Բարեկամութիւնը ևւ Սէրը ամէնէն սրտայոյզ շեշտերով կը յիշուին:

Սէր և Բարեկամութիւն՝ կեանքի մէջ: Ահա՛ ինչ որ խորհեցայ և խորհրդածեցի բարեկամիս գողտր մէկ նամակը կարդացած ատենս, անոր հմայքին տակ բարախուն, անոր զմայլանքովը արբչիւ: Եւ ըսի. «Սէրը արեւն է որ կ'ոսկեզօծէ, Յոյսի մէջ տարուբերող անհուն այլուր մը՝ որ հոգիին ծարաւը կ'անցընէ և որ, կեանքին խորհրդաւոր մէկ լրացուցիչը ըլլալէ դատ, անոր բարոյականին իսկ առանցքն է»: Միւսը, բարեկամութիւնը՝ քոյրն է անոր, հազուադիւս ու անգին գեղեցկութիւնով շնորհ՝ որ կը խուսափի միշտ, և որ օր մը, վերջապէս, մեր սիրտներուն անծանօթին մէջ սահելով կը թրթռայ. և այն ատեն, յու-

զուսմայից տրոփներու տակ մեր սիրտը սրբազան խորանը կ'ըլլայ լուսավառ՝ մտերմութեան ու խանդավառանքի բուրվառին առջեւ խոկացող, երբ զոյգ հոգիներ, հաւասարադէս զգայուն, համակրանքի երջանիկ երգով մը իրարու կը մօտենան.

«Մենք զերբ երկու ճգն՝ն բոցեր

«Եւստու մէջ կ'այրէինք սոսկ» .

ինչպէս հոծեց տագոյն Դուրեանը :

Դժուար է Կեանքը սահմանել, եթէ ոչ անկարելի : Ոմանք պատւանք մը կը նկատեն զայն, մէկը՝ աղւոր ունայն մը, ուրիշ ինչ՝ վիշտերու չզլծալում մը՝ որուն առաջին օղակը ցաւէն կը բրթի և որուն վերջինը կը կորսուի Մահուան մեծ ու տափակ ցաւին մէջ . . . : Բայց ես, գուցէ քիչ մը աւելի լաւատես, այդ տեսակ վճիռ մը տալէ առաջ, սեւեռում մը, ձգտում մը կ'ըլլամ նայուածքով ու միտքով և երեւակայութենէս կը վանեմ նմանօրինակ սահմանումներ. զորս չեմ ճանչնար և զորս չեմ հասկնար. Կեանքը ինծի համար իմաստ մըն է իրական ու չօշափելի, ինչպէս անհուն պրիսմակ մը՝ որուն մէջէն ամէն գոյնին ալ կ'անցնին, և չեմ ուզեր այդ իմաստին առաջին ու վերջին գիծերը միայն ընդունիլ . . . : Աղւոր ունայն մը. ինչ ճարտար ու սրամիտ մեղհութիւն և ինչ խուսափողական սահմանում. աղւորը՝ ունայնին քով և ունայնը՝ աղւորին հետ . . . : Այն մեծ անձանթը ուժը՝ հզօր իմացականութիւնով և աննման հանճարով «ունայնէն գոյ ըրաւ» տիեզերք մը՝ որ իր Երազն էր հսկայ . . . ու մենք, խորհող էակներ, աշխարհի հիւլէ ենք որ չկարենանք պաշտպանել մտածումը, յղացումը Կեանքին, զայն ճակատագրական անխուսափելիութիւն մը ներկայացնելու տեղ՝ անիմաստ կատակ մը, անհամ կատակերգութիւն մը ցոյց տալով . . . : Բայց Կեանքը սահմանելէ առաջ, պէտք էր բուն մարդը ուսումնասիրել : Նիւթապաշտ, դրական մարդը քովէն կը տեսնէ զայն, իրապաշտը չորս կողմէն, գաղափարականը՝ ճիշդ մէջէն : Ուրեմն, բուն կեանքը հասկնալու, ըմբռնելու, ապրելու համար պէտք է զգալ ու սիրել, երգել ու խորհրդածել : Գաղափարական մը չի կրնար շուարիլ այդ իմաստով կեանքին դէմ՝ երբ սիրտը յափշտակուող և թրթռուն, միտքը ազատ ու սլացիկ է և հոգին՝ բիւրեղ ու արշալուսային . . . և անոր իրաւունքն է թռն կեանքը վայելել : Դժբաղդաբար, մեր զմայլանքի ու հեշտանքի պահերուն, շատ անգամ, տխուր համակերպութիւնով մը, կը խորհի մարդ այն թանին՝ որուն վրայ երբեք մտածելու պիտի չզլծանէր, սերժելով, վանելով անոր հեգնութիւնը—Նիւթին : Բայց ինչո՞ւ, մեր վերացումի, թուիլքի խրոխտ ժամերուն, երկինքին կապոյտ անբաւութենէն դէպի վար, երկիրի վրայ, այս ջանջախիչ անկումը : Բարոյական այս պարտութիւնը նուաստացուցիչ չէ՞ այն հոգիին համար՝ որ իր բաբախուն թեւերով, միշտ կեանքի նրազին ու ժպի-

տին , Յոյսին ու Գործիլին շուրջը կը թեւածէ . . . : Որովհետեւ նիւթը , կեանքին հրաւառ հորիզոնին վրայ իր լայն շողացումի լսածինը ունեցած է միշտ , որչափ ատեն որ քաղաքակրթութիւնը քաղած է , մարդուն ապրելու պահանջները աւելցած , խտացած են : Բայց զաղափարապաշտը «ոսկին ոռկիլին վրայ» դիպուած տեսնելու գոհնիկ հաճոյքը վայելելու համար չի՝ սիրեր նիւթը : Ան կը շատանայ միայն նիւթը միջոց մը ընծայել՝ ղինքը աննիւթին վայելքներուն հասցնելու սկզբունքով : Որով թէ կեանքը կը նկատէ տեսակ մը աղամանդի հանք՝ զոր պէտք է բարոյապէս , նիւթապէս ու տեսլականապէս շահադործել զիսնալ և օգտուիլ անկէ :

*

Պատկեր մը կը դնեմ հոս , արագ ու հեւքոտ : Իրիկուն մը , Գուշ - Տիլիի անշոճք դեռտակին մօտերը պղտիկ պտոյտ մը ընկելու համար մարդագեղանէն առաջացայ : Նեղ կամրջակի մը վրայ ելլելով սկսայ դիտել : Արեւը կորսուած , լուսինը հարսնացած էր : Զուրին երեսը կիւսական տեսարան մը : Գողափարի մը պէս սկսայ սաւառնիլ հեղ : Հոս գիւ մըն էի : Դիմացս , սիրուն նաւակի մը մէջ , երկու սիջուռ աղաքներ կը թիովարէին : Սկսայ դիտել : Նաւը ափունքին մօտեցաւ և այդ անրիճ զոյգ մը անմեղութիւններուն քով սահեցաւ էին մը , թերեւս մայր մը , Սէր մը : Ու պտոյտը զանոնք անձանթութեան , նստելով յուշկապարիկի մը պէս , մինչդեռ ես՝ տեսարանին դիւթութենէն խեղձայեղ , նայուածքներ կը նետէի անհունին լուծեան մէջ . . . : Կեանքը ուրուագծուեցաւ աչքերուս առջև՝ բարախուն ու տղաւորիչ : Զուրին քիւրեղին վրայ , երկինքին շուշան Կերսը , գետափին լայն սառւերնեքուն տակ , հեւացող տերեւներու մէջէն և այդ Մայրութեան ու Անմեղութեան Մտածումին շուրջը՝ Կեանքը տեսայ ժպտալէն ու խանդոտ : Ու այդ հինգ գիրով կրակէ բառը աչքիս առջև մեծցու , լայնցաւ . . . իւրաքանչիւր տառ անհուն իմաստ մը եղաւ . — Ար՝ Կուսութիւնն էր խարտեաչ ու անմեղ . Սը՝ Երջանկութիւնը միշտ խուսափուկ ու հետապնդուած . Սը՝ Աշխատութիւնը , մշտապէս ջանքը հասնելու խաղաղ կեանքի մը երանութեան . Նն՝ Նիւթը խորիտ ու հեգնոտ՝ որուն մօտ պիտի փչրուին միշտ՝ անեղ մտածումներով ու երազապաշտ զգացումներով սնած ճակատներ . իսկ Քն՝ Քնարը տխուր ու սիրտմաշուք՝ որ մեր մահուան անկողինին շուրջը պիտի հեծկլանայ . . .

ՄԻՀՐԱՆ ՌԵՂՈՒՐԵԱՆ

ՄՈՒՍԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՅՑԸ

Քանի մը տարի առաջ , ձմեռը գիւղը մնացինք : Մեր մօտերը ընտանիք մը կար , մեզի պէս ամառանոց եկած , բայց հոգքէն հոն մնացած : Այր և կին էին և պզտիկ մանչ մը ունէին , որուն անունը Պարոյր էր , բայց իրենք «Պօպօ» կը կոչէին , որովհետեւ աղուն արտասանած առաջին բառը «պօպօ» եղած էր : Զմեռը գիւղին կեանքը խիստ միօրինակ կը դառնայ երբեմն . ատեն մը կու գայ՝ երբ մարդ կը ձանձրանայ՝ ծովին ու ամայի ճամբաներուն նայելէն , որչափ որ ալ սիրող ըլլայ ատենց : Քիչ մը ընկերակամութիւն գտնելու համար՝ շատ անգամ այդ ընտանիքին կ'երթայի : Այրը չնորոգով մարդ մըն էր , որ առտուէրը երբ մութին կ'երթար , իրիկունները մութին կը վերադառնար : Տիկինը փափուկ կին մըն էր . աղւոր դաշնակ կը զարնէր և ամուսինին ու աղուն վրայ կը դուրսգորար : Իսկ Պօպօն , ախ , Պօպօն , գիւղին է'ն անառակ բղան էր . եռացող ջուրի կը նմանէր : Յորեկները չուզելով դպրոց կ'երթար , իսկ իրիկունները , արձակուելէն հոգք , կայծակի պէս մէյ մը մօրը կ'երեւար , հոգքէն կ'անհետանար . կարելի չէր բռնել զայն , ծակէ մը կը փախէր . ծովին եզերքը , լեռներուն վրայ , ձկնորսներու նաւերու մէջ , ամէն տեսակ տեղեր՝ կ'երթար կը մանար , յետոյ , գիշերը , հօրը գալուն ատենները միայն—հօրմէն սաստիկ կը վախնար—տուն գալու համար : Ես շատ կը սիրէի Պօպօն : Հիանալի կապոյտ աչքեր ունէր և գանգուր մազեր , որոնց գեղեցիկ ըլլալը շատ աղէկ գիտնալով՝ երբեք չէր ուզեր որ կտրէին . մազերը հոգիին պէս կը սիրէր . երբ մայրը զայն վախցնել ուզէր . «Հիմա քեզ սալիքիլին կը զրկեմ» կ'ըսէր , և ատիկա բաւական էր վայրկեան մը , բայց միայն վայրկեան մը , հանդարտեցնելու անառակը : Տասը տարու կար Պօպօն , թէև աւելի պզտիկ կ'երեւար : Չափազանց զգայուն էր , և երբեմն աղւոր երազուն բան մը կ'ացնէր աչքերուն մէջէն : Բայց դպրոցէն ծուլութեան համար կրած պատիժները բնաւ աղդեցութիւն չէին ընել վրան : Դասերէն լուր չունէր , սակայն շատ լաւ գիտէր բոլոր տունը եկած թերթերուն անունները՝ իրենց խմբագիրներով մէկտեղ , և հետամուտ էր մօրը զարկած կտորներուն ֆրանսերէն անունները սորվիլ եւ ծախել՝ երբ հիւր մը գար : Դիտած ալ էի որ , երբ բան մը կարդայտէր իր ներկայութեան , աչքերը խոշոր մը բացած մօտիկ կ'ընէր , բայց յաջորդ վայրկեանին անդին կը դառնար , և , օրինակի համար , շուրհին պոչէն կը քաշէր :

Իրիկուն մը՝ նորէն անոնց դացեր էի . անձրեւոտ , մշուշոտ իրիկուն մըն էր : Տիկինը մինակ գտայ . հանդարտ հանդարտ՝ սկսանք խօսիլ : Մէկ մըն ալ դուռը կամաց մը բացուեցաւ և Պօպօն ներս մտաւ : Աչքերուն չէի հաւատար . ինչ , իրաւ Պօպօն արդէն իսկ սեն-

եակին մէջ էր և դաշնակին վրայի լուսանկարները , ծագկամանները իրենց տեղերն էին մնացած և պատերուն վրայի պատկերներն ալ , սո-
վորականին պէս , չէին պարեր . — որովհետեւ , երբ Պօպօն ամէն իրիկուն
էր մուտքը կ'ընէր , փոթորիկ կ'ելլար սենեակին մէջ : Բայց այդ իրի-
կունը հանդարտ մը եկաւ և աթոռ մը տունելով կրտկին տաջե տեղա-
ւորուեցաւ :

— Բարի իրիկուն Պօպօն :

— Բարի իրիկուն , մայրիկ :

Եւ անշտի : Երազուն աչքերով կրտկին մէջ կը նայէր , ձեռքովը
ճակտին մազերը շոյելով : Ծունը քովն իվեր կը ցատկաւէր , բայց
Պօպօն չ'էր փորձուեր անոր երկար դարձած պոչը քաշելու : Ինչ կար :
Ճայի տառն , փոխանակ կերակուրները լափելու , աչքերը միշտ պտուղ-
ներուն վրայ պտացելով — մոռցայ ըսելու թէ Պօպօն ամէն բանէ առաջ
մէծ շատակեր մըն էր — կամաց կամաց , ակնարկը վար , ապուրը կը
խմէր :

— Հաւանեցա՞ր ապուրին , Պօպօ , հարցուց մայրը , որուն Պօպօն փի-
րիսոփայօրէն պատասխանեց .

— Հաւանիլը չի հաւանիլը ինչ է . բան մըն է կ'ուտես :

Ու լռեց . ուրիշ ատեն կ'աղաչէինք , կը պաղատէինք , կը յանդիմանէինք՝
որպէս զի լռէ և մեղի ալ ատեն տայ խօսելու . այդ գիշերը երկու բառ
հազիւ : Բնթորիքէն ետքը դնաց , պատուհանին առջեւ տեղաւորուեցաւ ու
սկսաւ պիշ պիշ դուրս նայիլ : Ապաստէին կարմրուկ ալուոր խնձորներ ըն-
բաւ , անանկ որ իմ իսկ ակորժակս գրգռուեցաւ : Բայց Պօպօն ոչ մէկ
տկնաբն ընդունեցին անոնք , խեղճ խնձորները . . . : Յետոյ զիս քո-
վը կանչելով . — «Օրիորդ , ըսաւ , չիտակ ըսէ , չե՞ս կարծեր որ սա նոճի-
ները հիանալի կ'երեւան կոր մութին մէջ . ա՛խ , իրաւ , սքանչելի են :
Հապա սա խեղճ շուները , նայէ՛ , ցիխին մէջ պառկեր են» :

Պօպօն , մեր անառակ Պօպօն , նոճիները հիանալի , սքանչելի կը
դանէր , և իր շունին հոգին հանող Պօպօն փողոցին շուները կը մեղ-
քնար : Ինչ զգայութիւն , Աստուած իմ : Բաւական զարմացած , գացի
գիրք մը առի ու նստայ . սենեակին մէջ մինակ էինք , երազող աղեկը
ու ես : Բիշ մը վերջը պատուհանը ձգեց ու խնձի եկաւ , մէկ մատը
խածած , միւս ձեռքին մէջ ճմրթկած թուղթի կտոր մը բռնած և
շուարած ձեռով մը կամաց մը ըսաւ ականջիս .

— Օրիորդ , բանաստեղծութիւն մը գրեցի , տե՛ս , գարունին
վրայ է . . .

Մուսային առաջին այցն էր Պօպօնի :

ՄԱՆՆԻԿ Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

ՕՐՕՐՈՑԸ ԵՎ ԴԱԳԱՂԸ

Օրօրոցը եղաւ Տիեզերքը իմ կեանքին . հոն բացուեցան աչերս լոյսին , հոն տեսայ մօրս հրեշտակային դէմքը : Հոն ծծեցի անոր անուշ կամին հետ սիրտին սէրը , որոնք իմ կեանքիս նեկտարը եղան : Ես օրօրոցիս մէջ լսեցի մօրս մեկանուշ նեղեցիները , որով ան երկինքի հրեշտակները պահապան կը կանչէր ինձի , մինչ ինքն էր ու եղաւ ամէնէն արթուն , ամէնէն անքուն , ամէնէն անձեռէր պահապան հրեշտակաւ Մանուկ կեանքիս ան մեղուկ օրերուն ու սիրտիս կոյս զգացումներուն բոլոր եղաւ օրօրոցը , հոն կապուեցան հոն քուկուեցան անգործ թռչուններս , հոն տեսայ առաջին արցունքը մօրկանս և անոր երկնային սուրբ ժպիտները , որով կը համբուրէր զիս , վայելեցի անհուն սիրով տար ճառագայթները՝ որոնցմով տոնեցաւ , ուռնացաւ մանուկ կեանքս , փափկամեծ ծաղիկի մը նման : Ո՛վ կրնայ մոռնալ օրօրոցը , իր մանկութեան կեանքի այդ տիեզերքը . օ՛հ , դարեր ու ժամանակներ չեն կրնար քնչել մեր միտքէն անոր անուշ յուշը , ինչպէս մեր սիրտերէն մօր մը սիրտին անձնատուհի սէրը , անոր արցունքները , անոր սուրբ ժպիտները : Օր մը տունի մը մէկ անկիւնը տեսայ հին օրօրոց մը . տունտիկիկը եօթմասնասունի մօտ ճերմակ քման մազերով մեծ մայր մըն էր : Հարցուցի իրեն թէ՛ ալ ի՞նչ բանի կը ծառայէ այդ հին ու մին օրօրոցը , ինչո՞ւ պահուեր է հոն մինչև հիմա , մինչ ինքը թոռներու և թոռնիկներու տէր մեծ մայրիկ մըն է ալ : Տիկինը ետին դարձաւ , խոռոչացած աչքերը լայն լայն բանալով՝ ակնարկ մը նետեց այդ հին օրօրոցին վրայ և ինձի դառնալով ըսաւ . « Ո՛հ , ան իմ անդրանիկ չլաւկիս , իմ Զարեհիս օրօրոցն է . անոր մահուընէն ետքը թէ՛ և միւս փոքրիկներս չմեծցուցի անոր մէջ , բայց զայն այլ չկրցայ հեռացնել աչքէս , տունն ու սիրտէս : Արցունքի քանի մը խոշոր շիւթեր թափածփեցան իր խորշմած այտերն ի վար : Յետոյ իր մայրական սիրտի յուշատետքէն քանի մը էջեր թղթատեց . Զարեհին ամբողջ կեանքին պատմութիւնն էր ան , պատմութիւն մը՝ զոր միայն մօր մը սիրտը կը զգայ , մօր մը հոգին կրնայ պահել սուրբ ու սրբազան մատենքի մը պէս :

Այդ օրօրոցը , ըսաւ , կտակ եմ ըրած որ մինչեւ իմ մահս չվերջնեն տունիս անկիւնէն : Օրօրոցին պատմութիւնը զիս ալ վերադարձուց իմ մանկութեան օրերուն , իմ ալ կեանքիս օրօրոցին : Մտածեցի սակայն թէ՛ օրօրոցը ի՞նչ տարբերութիւն ունի դազադէն , թէ՛ և ասոնք զիրար հակասող բաներ են : Մէկուն մէջ կեանքը կ'աճի , կը շարժի , կը ժպտի , կու լայ , իսկ միւսին՝ մէջ ամէն բան անշարժ ու անկենդան է :

Առաջինը մօր մը սիրտին ու սէրին հետ է կապուած , երկրորդը՝ արցունքին ու հառաչանքին . մէկին մէջ համբոյր ու ժպիտներ կան , միւսին վրայ ցուրտ հողը և քարը . մէկը վաղուան լոյսը և կեանքը ունի . միւսը՝ ա՛հ՝ յաւիտենական աղջամղային խաւար մը և մահը հոգեհարստու : Կեանքը սակայն վերջացած չէ , կ'ըսեմ ես , հաւատքիս կոյս զգացումովը և խորունկ ըմբռնումովը : Ո՛հ , հաւատքը , անդշխիւմեան յոյսը ի՞նչ անուշ է օրօրոցէն ետքը՝ դազադին առջեւ : Զարեհին ծերուկ մօրկան հաւատքին կոչում ըրի , մայրական անհուն սէրն ալ յիշելով : Ան զլուխը թօթուեց ու նորէն աչքերը յառեցան հին օրօրոցին վրայ : Զէ՛ , մայրիկ , ըսի , մեր սիրելիները նորէն պիտի վերածնին հոգեւոր մարմնով մը իրենց դազադէն , իրենց թիւն ու խորհրդաւոր շիրիմներու խորքէն : Օրօրոցին մէջ ինչպիս մայրն էր՝ որ կ'երգէր իր ամէնէն փափկամեծ օրբերոցները , հիմա ալ մայր բնութիւնն է որ իր կարգին կ'երգէ իր ամէնէն հոգեզմայլ ու ահաւոր օրբերոցը : — « Ո՛հ , սակայն , վարդապետ , ըսաւ պառաւը , օրօրոցին ու դազադին միջև գտնուած ահագին ու անջրպետային զաղափարը կարելի՞ է հաշտեցնել . օրօրոցը և դազադը շարունակ զիրար չպիտի հակասեն » — « Ո՛չ , ըսի , այսօր , վաղը ու յաւիտեան , իգէտք է հաշտեցնել մահուան գաղափարը՝ ծնունդին հետ , օրօրոցը դազադին հետ : Պէտք է համոզուինք որ օրօրոցին կեանքը կարծ է ու դառնութեամբ լեցուն , իսկ դազադին կեանքը երկայն է , բայց անմահութեամբ առլցուն : Ծնունդը և մահ երբեք չեն հակասեր զիրար , այլ կը լրացնեն : Օրօրոցի կեանքը արշալոյսն է՝ մարդկութեան , դազադին կեանքը վերջալոյսն է անոր » : Զեմ գիտեր թէ՛ կրցե՞ր էի դեռ հին օրօրոցին անուշ յուշը և Զարե-

հին մահը չմոռցող մօր մը միաբը և զգացումը հաշտեցնել օրօրոցին ու դազողին զիրար երեւում ապէս հակասող զոյգափայտին մասին : «Մի՛ մոռնար, ըսի անոր վերջին բառով մը, Յիսուսի մտերը ու թափուր գեղեզմանը» :

ՆԵՐՄԷՍ ՎԱՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՍԱՐԴՈՒՆ ՍԷՐԸ

ԿԵՆԴԱՆԻՆ ՉԱՆԴԷՊ

Մարդուն՝ կենդանիներու հանդէպ ունեցած պարտականութեան եւ սէրի գաղափարը եւ իր ու անոր մէջ եղած սարքերութիւնը՝ կարգ մը հայեցակէտերով կը զանազանուի : Համաստումութեան (Panthéisme) վարդապետութիւնը դաւանողները կենդանիներու հանդէպ արտասովոր գորգութեամբ մը ունին : Հնդկաստանի բնիկները այս համաստումութեան վարդապետութեան կը հետեւին : Ասոնք՝ կենդանիներու յարձակումին ծառմեալ մարդուն գործադրած անձնապատկանութիւնը՝ իսկ կրօնական օրէնքի կարգը դասած են : Յոյն իմաստաւէր մը այս վարդապետութիւնը Յունաստանի մէջ ալ տարածեց. նոյն իսկ այդ իմաստաւէրին սպանդարդիւնը մակերութիւնը : Պլուտարխոս ալ իր կարգին կենդանիներուն մէկ կատարի պատկանը հանդիսացաւ : Միայն անպէտ եւ ծերացած ձիերը կարելի էր ծախել : Պլուտարխոս այդչափ զարնուողիւն մը միայն կրցաւ գնել : Բայց վաճառուի՝ կենդանիին հանդէպ՝ աստեղանդութեան ցոյց կը նկատուէր, Լանի որ ծախուած ծեր կենդանիին՝ իր երիտասարդական օրերուն մասնացած էր : Եւ այն ամէն օգուտները՝ որոնցմով մարդ էակը կրցած էր ապրիլ, կրցած էր հարստութիւն մը խմել, կամ իր կարգին համբաւ մը շինել : Պլուտարխոս շուներու համար ալ մեծ պատկանութիւն մը ցոյց տալով, անհրաժեշտ խնամք մը սահմանեց անոնց :

Մովսիսականութիւնը նոյն այս շաւիղին վրայ կ'ընթանայ : Աբրահամեաններուն Հնգամասեանը, որ Բաղդադական ու Բաբելոնական օրէնքներու հաւատածոյ մըն է, մարդուն շաքրութեան առաջին օրուն մէջ հանգիստ

մը սահմանած ասէն, Եզրի ու Էփն համար ալ հանգիստի մասնաւոր օր մը կը սահմանէ. «Բարոյադաս եւ իրաւագիտ մարդը, կենդանիներու կեանքին կարեւորութիւնը կ'ընծայէ միշտ. բայց ուրիշ բան որ՝ խղճածուէն կը վարուի անոնց հետ» : Այս խօսքը Մովսիսականներու մէջ առօրին կարգ անցնելու աստիճանը բնորոշեցաւ :

Քրիստոնէութիւնը կենդանիին հանդէպ լաւ վարմունք մը կը յանձնարարէ : ԺԶ. Դարու իմաստաւէր մը, մարդուն եւ կենդանիին մէջ համամասնութեան ուժեր նշմարելով, լաւ վարմունք մը պատուիրած է, միւս կողմէ կենդանիին դէմ անձնապատկանութեան անհրաժեշտութիւնը ալ շեշտելով : Սակայն ոչ առաջին պարագան եւ ոչ ալ վերջինը կարեւորութիւնը ստացած են : ԺԷ. Դարու իմաստաւէրական ոգին կ'ընդունէր թէ, մարդուն՝ կենդանիին հանդէպ ունեցած պարտականութեան խնդիրը մէջտեղէն վերցած է : Տէֆաուդեան վարդապետութիւնը, կենդանիները իբր մէյմէկ զպատկանութեան եւ կամ մարմնային կազմածներ կ'ընդունի :

Արեւելեան ժողովուրդը իր գործը պահած է դէռ կենդանիին հանդէպ : Պատմական Միջերկրի երկրերէն մէկուն մէջ սա յիշատակութիւնը կ'ընէ. «Ասիական երկրին բարոյականութիւնը, իրեն վերաբերող անհասիւն բնութեան մէկ մասը կը կազմէ. այդ վնաս գեղեցկութիւնը, այդ բարոյականութեան զօրաւոր կապը՝ անհասիւն խառնուածքէն չբաժնուիր, որչափ որ ան կ'ապրի աշխարհի վրայ» : Արեւելեան ժողովուրդին՝ կենդանիներու հանդէպ արած գործը ամէնուն ծանօթ է : Աղաւթիները եւ ծիծեռնակները արձակ համարձակ իրենց բոյնը կը շինեն մեր խոհարար եղբիւներուն փութումն առնելով, որովհետեւ այս աղածքի քեւարները միշտ Արեւելիցիին անդրում բարոյութեան եւ աստեղանդութեան վաստած են : Հռչակաւոր «Լօյնեյ» «Տղամները անգամ այդ բոյներուն չեն դալիր» կ'ըսէ ու հիացում կը յայտնէ : Հին Հելլեններու օրով, դարեւ առաջ, Արեւելի պատարունքն ասէն, պատարեալները փոխանակ իրենց կենդանիները ոչնչացնելու, զանոնք պարսպէն դաւաւ շուռնով վար կախեցին, որովհետեւ

կենդանիին հանդէպ իրենց ունեցած գուրգուրանքը իրենց հոգիին մէջ հին ծածուկանքներէ իվեր արմատացած էր, հելլէն բարոյագոս իմաստաւորներու շնորհիւ, իսկական բարոյագոս իմաստաւորութիւն, ուր անպարտելին Պլուտարհոս երեւան կու գար այդ վարդապետութեան մէջ կորդակախորհիւս վէզ գալով :

Կենդանիներու նկատմամբ մարդուն ունեցած ժեղերական պարտականութիւնները իսկականն են երգարժութիւնով . կը կատարուին : Այս կարգի պարտականութեան պէտք ժժ. Գարու իմաստաւորները շեշտեցին : Բայց ոմանք աննպաստ կարծիքներ ունեցան . մինչեւ անգամ Միջերկրական գործազեղ տնտեսութիւններն ալ սոսկանելով : Հակառակ կարծիքներ յայտնողները կ'ընէին . «Մարդ կենդանին կ'որսայ . աս իր մեծածորհներէն մէկը կը համարուի . դաւեր կը նիւթ , անորմէ կ'օգտուի , կը ծախէ , կ'ուտէ , ասոնց մէջ ո՛չ մէկ ոնիր , ո՛չ մէկ խղի խայր » : Մինչեւ . հիմա կենդանիներու նկատմամբ Հնդկներուն սաւած գործը կը ցուցնէ թէ՛ անոնք տակաւին նախնական մարդուն վիճակը թօքալիւմ չեն : Մարդ ո՛րքան բարձրանայ , նոյն համեմատութիւնով կենդանիները կը հեռանայ : Եթէ որսորդութիւնը գոյութիւն չունենար , ուր կամ կանուխ անոր տեղ ուրիշ վարպետորդութիւն մը երեւան պիտի գար :

Իրաւաբանական տեսակէտով կենդանին գոյացութիւն մըն է միայն . այդ գոյացութիւնը կրնայ մարդ էակին նէս զգալ , կրնայ անոր պէս տառապիլ : Մարդը իր զգացողականութիւնը հոգեբանական երեւոյթներով է որ կը յայտնէ . մինչ կենդանին ջղային ազդակութիւնով : Մարդ միայն իր ժիզիւհական տառապանքներուն նմանութիւնն է որ կրնայ զգնել կենդանիին յարափոխութիւնը : Պիտիւնը զիմայեղումներուն վրայ :

Կենդանիներու հետ լու վարուելու գաղափարը առաջին անգամ Անկլո-Սաաոններէն ծնունդ առաւ . անկէ ետք՝ միւս եւրոպական տնտեսութիւններն ալ այդ օրինակին հետեւեցան համոյալիստներէն : Ժժ. Գարուն , Հիւկարթ անուանով նկարիչ մը , մարդկային սիրտը փղծկեցուցած է իր վրձնած

չորս գեղանաւ նկարներով , ուր կենդանիներու վրայ՝ գործադրուած անլուր խուժուածութիւնները բնական զոյներով պատկերացուած էր : Նկարիչին այդչափ բներդ նկարները իրենց բարոյական ազդեցութիւնը ունեցան : 1809ին Լոռս Էրսթըն , անգլիական խորհրդարանին մէջ կենդանիներու դատարարականեց , անոնց իրաւունքները վեր առնելով : Այդ բուականէն տնտեսիկ տնտեսիկներէն տնտեսիկ օրէնք մըն ալ հաստատուեցաւ որ խուժողութիւնը կը զգաստեցնէր : Այսպէս , կենդանիներու պատշաճութեան համար 1824ին Լոնտոնի մէջ առաջին ժողովը գումարուեցաւ . իսկ քանակներու տնտեսիկ տնտեսիկ մէջ : Այս ժողովները բարոյական մեծ ազդեցութիւն մը գործեցին հաղափարական տեսակէտով , եւ կենդանիներու հետ լու վարուելու գաղափարը ամենու միջոցին վրայ զօրեղապէս ազդեց : Մինչեւ այսօր կենդանիներու տնտեսիկ տնտեսիկ վարմունքներ կը նմանուին : Ոմանք նոյն իսկ իրենց կտակներէն բաժին մը կը հաճեն անոնց , Վերջերս , այս կարգի կտակ մը լսեցինք , գործարարական չափի կոչման , հոն որ այս տակ յղացումները ամեն անգամ բարոյագոս իմաստաւորութեան մը վրայ հիմնուած են :

ԼԵՒՈՆ ԷՍԽԱՆԵԱՆ

Կ ա ղ Պ ա լ

30 ոսկիի պարգեւը

Ազն. Օննիկ Պէլ Թաշեան տարուան մը Մասիս նուիրեց Խառ-Քէօյի Գալֆաեան Որբանոցին , ուր , շարունակելով նախորդ տարուան իր նուիրատուութիւնը , կը փութացնէր թերթերը :

Օրուան գրական նիւթն է .
— Կարդացէ՛ք Միամիտի մը Արկածները :
— . . .
— Կարդացէ՛ք :

ՀԱՅ ՄԱՍԻՍ

ՀԱՆԳԻՊ (ՄԱՍԻՍ)

Բիւզանդիոնի Տնօրէն-Խմբագրատեղ
Բիւզանդ Բէշեան Մասիսի մասին կը գրէ.—

«Գոհութեամբ կը դիտենք Մասիսի խմ-
բագրութեան ջանքերը՝ ա՛լ աւելի զարգաց-
նելու այս շարժումները՝ իբր զրական օւ-
կան »:

Հանդիմանք կը դիտենք մեր ներքին պաշ-
տոնակիցին՝ Մասիսը որակելու համար գոր-
ծած քացատրութիւնը , օւկան , Մա-
սիսի դերը և նշանակութիւնը իր իսկական
ձգտումով շեշտող :

Մանգումի Տէր և Տնօրէն Յովնանէս
էֆ. Ֆէրիտ Դալէքեան , որ տարիէ մը
իվեր Լոյսը կը հրատարակէր իբր կրօնա-
թերթ և վերջերս կինեբու յատուկ թերթ ,
Նոր Տարիէն զայն վերածած է զրական շա-
բաթաթերթի , խմբագրութիւնը յանձնելով
Արամ Անտոնեանի : Լոյս տեսաւ առաջին թի-
ւը , պէպիսուն բովանդակութիւնով : Յաջո-
ղութիւն կը մտնենք :

§ Հանրագիտակ ալ հրատարակեց նկա-
րատետր մը , որ շնորհաւորելի գործ մը պի-
տի ըլլար , եթէ իր ներկայացուցած դէմքերը
հպատակէին որոշ և անմերի զատակարգու-
թեան մը , չզգացնելով պակասը կարեւոր
դէմքերու և աւելորդութիւնը անկարեւոր
դէմքերու : Նկարատետրի կազմակերպիչին՝
Թէոդիկի զրական անխորհուրդ հանոյակատա-
րութիւնը և գործին մասին թեմեւ ըմբռնումը
հոս ալ իր դերը ունեցած է , անկազմակերպ
ու անծրագիր խառնուրդի մը կերպարանքը
տալով իր ձեռակերտին : Խոհականութեան
պակաս մը . չէ՞ նաեւ՝ բարեկամօրէն իրեն
յանձնուած լուսանկարի մը հրատարակումը ,
առանց գիտակցութեան իր տէրին՝ Ենովք
Արմէնի , որ անմիջամտելի՝ անմեղ բնահանոյ-
քը ունեցած է միշտ՝ չկրնալ հաշտուելու՝
լուսանկար հրատարակելու գաղափարին , զգա-
ցում՝ զոր յախուռն անշրջահայեցութիւնով
եղծած է Թէոդիկ :

§ Եանթ ուսուցիչ Սիմոն Դարամանեան ,
Նոր Տարիի առիթով աղոց և դպրոցականնե-
րու յատուկ Ծաղիկէն թիւ մը բացառաբար
իւր խմբագրութիւնով հրատարակեց , կազմե-
լով զրական փունջ մը : Դիմեց Ե Պըշ :
Դիմել Հանօրուք խան , Թիւ. 24 :

§ Արեւելեան Մամուլ կը ծանու-
ցանէ թէ՛ յաջորդաբար պիտի հրատարակէ
եռամսեայ թիւեր , անշատաբար իր շաբա-
թական թիւերէն , ստորա ծաւալով և հոխ
բովանդակութիւնով : Առաջին թիւին ծանուց-
ուած բովանդակութիւնը աղէկ զաղափար կու
տայ գործին վրայ : Արեւելեան Մամուլ
կրնայ հիմա մէկնել թէ՛ ինչ կերպ կը դա-
տենք մենք իրելը , և ինչպէս կ'որոշենք
իւր փոփոխած սխալի շարունակական ակնար-
կութիւնները՝ ուղղուած Մասիսին :

Կովկասի փոխարքային դիւանատունը Էջ-
միածինի Սինողին յայտարարեց է որ Հայե-
րու ծխական դպրոցներուն համար նոր կանոն-
նագրութիւն մշակող Յանձնաժողովին նախագահ
Հակիկ մտադիր է աշխատութեան սկսիլ մօտ
օրէն և կը խնդրէ Սինողին իրեն հաւոր-
դել թէ՛ այս Յանձնաժողովին Հայ անդամները՝
երկու աշխարհական և տեղակալ Մուրէնեան
Արքեպիսկոպոսին փոխանորդը՝ Տ. Յուսիկ Արք-
եպիսկոպոս ե՞րբ Թիֆլիզ պիտի գան Էջ-
միածինի Սինողը պատասխանել է Գո-
խարքայի Դիւանատունին թէ՛ դպրոցական
խնդիրին լուծումը իր իրաւասութեան վեր է
և այս պատասխանը զրկել է տեղապահին ,
որպէս զի զայն հաջորդէ ձեռնհաս իշխանու-
թեան :

§ Մասիսի Մատենադարանին առաջին
հատորը կազմող Մերութան Պարսամեանի
Պատմութիւն Ծաղիկներին մէջ .

Էջ	Կարգալ
14	Թախտոյած
18	կը սպասեմ
32	սպասումին
34	ընդ
48	խոստումներս
49	անվերջնալ
58	տրտմութիւնով մը սիրողի
64	Տօրչենին

ԽՈՇԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԱԻՐ

Պատանգի Ծաղիկներին տպագրելը՝ Չարեհ Պէրպէրեան՝ անխորհուրդ անպարտութեան մը ծանծաղամտութիւնն է ունեցեր՝ հերքել փորձելով մեր դիտողութիւնը թէ՛ իր «Անխոստմնապահ ձգձգումներուն եւ յուսահատեցուցիչ դանդաղացածութեան» սխառմանով՝ անհատի յապաղեցաւ դիրքին անպարտելուն աւարտելը։ Գոր ինք կը վերադէ՛ — օ՛հ ձեռնածութիւնը — վճարումի մը յապաղումին, դիտակցարար գործադրուած, փոխարինելու համար իր ընթացքը։ Մանգումի իմպարատրական ալ տեղեակ է և կրնայ վկայել թէ՛ դեռ երկու օտար չընկեր, որ աւարտեցաւ դիրքին տպագրութիւնը։ Ինչ էր մեր ըսածը, ինչ կը պատասխանուի։ և ինչպէս այս անպարտութիւնը, որով մխիթարուելու չափ պարզամիտ կ'ուզէ ըլլալ մարդ։

ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆ [Իրիթիի Պէնէնի ԻՏԷՊ]

Դեռն է՞. Տէյրմէնճեան, որ գրավաճառական և տպագրական գործերու մէջ երկարամտական փորձառութիւն ստացած է, այս անգամ Պապը Ալի Ճատտէսի ձրդալ Օղլու փողոցը նոր գրատուն մը հաստատած է՝ «Բիթիւպանէի Իտէպ» անունով, ուր կը ծախուին թուրք, Հայ, և Թրանս, գիրքեր։ Կը տպագրուին քամպիւլ, նամակի և պահարանի զուխներ, մահազներ, հարսանեկան հրաւիրագիրներ, այցաքարդեր եւ այլն։ Կը կազմուին ինամուած կերպով ամէն տեսակ՝ գիրքեր եւ լրագիրի հաւաքածոներ եւ այլն։

Խիս գիւրմասշեյի պայմաններով

Անոնք որ այս գրատունին հետ դորձ ունենան, փորձով պիտի համոզուին Տէյրմէնճեան է՞ի ճշգրտագնութեան եւ յանձնարարութիւններուն արագ ու ճշգրիտ գործադրութեան։

ԾԱՂԻԿ տղոց շաբաթաթերթ. — Կը հրատարակուի տղոց և դպրոցականներու յատուկ նիւթերով, Սադայեան խնամուած տպագրութիւնով։ Տարեկան բաժանորդագրութիւնն է 30 դրշ.։ Տնօրէն՝ Սադայեան։ Հասցէ՝ Դալաթիա, Գուրչունլու Խան, Թիւ. 7, ուր պէտք է ուղղել նամակ, բաժանորդագրին կամ որ եւ է գրութիւն։

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Ծանօթ ստամաւարուժ Խաչիկ է՞. Ժամկոչեան՝ պատիւը ունեցած է անդլիայի տիկինէ մը ստանալու հետեւեալ նամակը։

Սիրելի Տէր. —

Ծնորճապարտ եմ Ձեզի որ՝ Սկովտիոյ և Մասաչուսէթի մէջ տարիներով դարմանել տալ չկրցած սկզբներս՝ հիմնապէս բուժել յաջողեցաք։

Տիկին ԱՆՆԷԹԱ. ՄԱՅԼՍ

ՀԱՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Հեղինակելու և հրատարակելու անոնք որ կը բաղձան Մանիւի մէջ ծանուցուիլը իրենց հրատարակութեան , պէտք չէ մտնում մեր պայմանը թէ , Ձ օրինակ զրկուած գիրքերը միայն նկատողութեան կ'առնուին և կը ծանուցուին :

ԱՐՆԵԼԷՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական և ֆաղստական . — Բաժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45 դրչ. , դուռնուրու համար՝ տարեկան 108 դրչ. , վեցամսեայ 60 դրչ. և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 ֆր. , վեցամսեայ 20 ֆր. : Զեռքէ վաճառում՝ քաղք փարս : ԱՐՆԵԼԷՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր , կէս օրին , խնամալ բովանդակութեամբ , ընտիր յօդուածներով , թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով : ԱՐՆԵԼԷՔ, իր վերականգնումը խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ , որմանապա՛մ բնթերցողներու գնահատմանը իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԸՂԱՅԻՆ հանգամանքը , որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները , եկեղեցական , կրօնական , անտեսական-տեղանաւորական , երկրագործական , իրաւաբանական և այլն , բացի գրական , բանասիրական գրուածքներէ , օրուան տեսութիւններէ ևն : ԱՐՆԵԼԷՔի վերաբերեալ ամէն զրուիւն և բաժանորդագիրն ուղղել Տէր և Տնօրէն Գաղեգին էֆ. Պոյաճեանի հասցէին , Դաւթիւ , Մահմուտի Ճառտէսի , ուր կը գտնուին թերթին Տպարանը և Խմբագրատունը :



Je prends tous les jours
de la vraie
CREME DE MORUE
de la Ph^e PEQUART de VERDUN-s/-Meuse
C'est très bon !!!
Petite mère, se méfie des produits
similaires; mauvais et digérant mal.
Le Flacon: 3^f 50 dans l^{es} Pharm^{ies}.
* SUPERIEURE a L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. *

Նշանաւոր Տոքթ. Բէքաուի այս էմուլսիօնը կը դերազանցէ հրապարակի վրայ գտնուած բոլոր իր նմանները : Զուելիւղի տեղ կը դարձածուի և անկէ աւելի օգուտ տնի տղոց և տկար անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ . Ո. Սօլախեանց , Կ. Պոլիս :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԴԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարձանէ ամէն տեսակ ախտայի և լինտի հիւանդութիւնները , փառած ախտաները կը լեցնէ՝ առողջ ախտաներու պէս երկար առեն զօրծածուելու պայմանով :

ԲՈՒՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՒ, նորը , ճաշակաւոր և դիմացկուն արուեստական ախտաներ կը պատրաստէ , բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ , Բերա , Մեծ Բարձաք-Գարու , թիւ 8 : Կարօտ հիւանդները ճիւղ կը դարձանէ հինգշաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունին :

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Դեղեցիկ տղադրութիւնով, գեղարուեստական կողքով, զրական հրապուրիչ ներքինով: Թրուան գիրքը և ամէնէն խօսուած հրատարակութիւնը: Էջ 280: Դինը՝ 7 զրշ.: Կեդրոնատեղ՝ Սթամպոլ, Շիրին խան, թիւ 7, Օննիկ և Բնիկ: Կը գտնուի ամէն զրաւաճառի քով:

ԳՐԱՏՈՒՆ ՀԱՊԷՇԵԱՆ. ԱՄԱՍԻԱ: Ամասիայի և չրջականե-

րու զրական պէտքերուն լիովին գոհացում տալու համար է որ հիմնուած է այս նոր զրատունը, ուր գիտակից խնամքով կը պատրաստուին յորում բոլոր յանձնարարութիւնները: Մասնաւորապէս յանձնարարելի է այս զրատունը բոլոր ուսուցիչներուն ու զրասէրներուն, իբր միակ կեդրոնատեղ լաւագոյն զասագիրքերու և լաւագոյն հրատարակութիւններու:

Միակ առտուան Հայաթներթը, կը հրատարակուի ար-
ՄԱՆԶՈՒՄԷ շալոյսին, և առտուն խիստ կանուխ՝ կը գտնուի Պոլիսի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հեռագիրներ, քաղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, գրական, տնտեսական և ընկերային յօդուածներ: Զորեքշաբթի և շաբաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը յատկացնելով առեւտրական և զրական գրուածքներու: Դինն է 10 փարա: Տարեկան բաժանորդագրութիւնն է Պոլիս՝ 30 զրշ., գաւառ՝ 108, արտասահման՝ 25 ֆր.: Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, գաւառ՝ 60, արտասահման՝ 18 ֆր.: Ամէն գրութիւն ուղղել Տէր և Տնօրէն Յովհաննէս Ֆ. էֆ. Դայսէրեանի հասցէին՝ 38, Պապը Ալի Ճատաէսի:

Դպրոցներու համար ակնհայտ է

Դրասենականներու համար կարելոք

«Մայցն»ներու համար գեղեցիկագոյն զարդը՝

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ

Հրապարակ ելաւ՝ վաւերացուած Հանր. Կրթութեան Նախարարութենէն: Վարժարաններու վարիչներուն, բոլոր ընտանիքի հայերուն և հայ վաճառականներուն կը յանձնարարուի մէյ մէկ հատ գնել այս կարեւոր և գեղեցիկ զարդէն: Դինն է չրջանակով 85, առանց չրջանակի 65 զրշ.: գաւառներու համար՝ իբր մնտուկի և փոխադրութեան ծախք 15 զրշ. աւելի Դիմել՝ Պապը Ալի Ճատաէսի, թիւ 56, Յովհ. էֆ. Լեղնաւորի «Օսմանլը» Գրատունը:

Երկ. ԴԵՂԱՐՈՒՆՍՏԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ «ՍԵՆԷՐ»Ի

Բերա, Մեծ-Փողոց, Թ. 343, Ա. Յարկ

Ամեն օր բաց է

ՄՈՒՏՔԸ ԶՐԻ

Ա. Կարգի մրցանակ հետեւեալ ցուցանանդէսներէն. Բարիզ 1900, Սէն-Լուի 1904, Միլան 1906, Պոլսու 1906:

“ՄԱՍԻՍ”Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և Ղազառներու համար տարեկան 60 ղրշ.:

Արտասահմանի » » 14 ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մէջ պարգեւները,

միշտ ձրիաւոր, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մուսիսի բաժանորդագրութիւնը բողոքածուական կախիկ է:

Դրամ կարելի է զրկել փոխանակաւորով, օսմանեան կամ

օտար մանսա-փոսքով և օսմ. թղթատարական նամակագրուշ-

մով, 20 հատը մէկ մէճիտի հաշիւով:

Զննատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել տա:

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ”Ի Հասցեով

Պասքի Ալի շասէտի, Թիւ 38

درعليه باب على جاده سنده نوسرو ۳۸ «ماسيس» عزيمتى اداره خانه مى

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

“ՄԱՍԻՍ”Ի Նոր Շրջանի Ա. Տարիի հաւաքածոն, որ 1000 էջէ բաղկացած՝ զբաղեցնում է զբաղեցնում է հասար մը կը կազմէ, հիմայ ասացուիլ Խմբագրութեան, կանխիկ փոխար- ժեքով՝ 60 դր. . կազմուած 65: Թղթատարով ղրկուելիք Հասարներու հաւար պէտք է 5 դր. աւելի վճարել:

Պ. ՊԱՆԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԻՆ ՄԷԶ

Կը դանուի Կաղանդի նուէրի համար ընտրելագոյն գիրքերու ճոխ մթերք մը, որմէ կ'արժէ որ օգտուին ծնողքներ: Գեղեցիկ ընտրու- թիւներ են մանաւանդ՝ նորատիպ ստուար գործը ողբացեալ գրողէ- տին՝ Յ. Ռ. ՊԵՐՊԵՐԵՍԻ:

Գ. ՊՐՈՑ ԵՒ Դ. ՊՐՈՒԹԻՆ

[Արժէքաւոր ու մատենադարանի ղարդ ըլլալու սահմանուած գեղեցիկ հատոր մը]

ԴՈՒՆ ՊԻՏԻ ԸԼԼԱՍԻ ԳՍԻՆԹ ԽԱԶԱՆՆ-Ի

[Օգտաւէտ հատոր մը տոյց համար]

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՆՆԵՐ՝ Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ-Ի

[Հրահանգիչ, ղրկուելու և հետաքրքրական]:

Եւ ուրիշներ, ղորս տեսնելու համար՝ պէտք է առիթ կորսնցնել՝ այցելելու Պալենց Գրատունը: